

8444



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«05» 08 2024թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 149 - 24

Նախաձեռնող՝

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ

Կոպրայքի մարզ, ք. Եղվարդ, Չարենցի փ., 198/2-2

Գործունեությունը՝

«Լոռի-1» միկրոռեզիդենսյալ մակարդակի համակցված
տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա
միջավայրի վրա ազդեցության ուղղման արձանագրության
էկոլոգիական գնահատման հաշվետվություն

Լոռու մարզ

Առդիր՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 149 - 24

«05» օգոստոսի 2024թ.

«Լոռ-1» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրության փաստաթուղթ
ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ)
հաշվետվություն, գծագրական նյութեր

Ներածական մաս Լոռու մարզի «Լոռ-1» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը (այսուհետ՝ ՄՄՀՏՊՓՆ) մշակման հիմնական նպատակն է՝ ներառված համայնքներում տարածական պլանավորման (ներառելով՝ բնակավայր, համայնք և մարզ մակարդակները) միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, ինժեներատրանսպորտային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացումը, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության ապահովումը, տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրությունը, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Հաշվի առնելով, որ միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց է, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձվել, որ այն հնարավորինս համահունչ լինի գործող ՀՀ ռազմավարական, մարզային, տարածաշրջանային, համայնքային զարգացման ծրագրերին:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ «Լոռի-1» ՄՄՀՏՊՓ նախագիծը հանդիսանում է հիմնադրության փաստաթուղթ:

Նկարագրական մաս. «Լոռ-1» Գուգարքի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որը հիմնականում նպատակաուղղված է տարածական-տնտեսական գործունեության ռազմավարական կազմակերպմանը, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատկազգային



տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծմանը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել նպաստավոր ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բարելավմանը:

Լոռու մարզի տարածքը կազմում է 3799 քառ. կմ: Մարզում ծովի մակերևույթից բարձր կետը Աջքասար լեռան գագաթն է (3196 մ), ամենացածրը՝ Քարկոփ գյուղի մերձակա տեղամասում Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 375 մ): Լոռու մարզը ընդգրկում է 128 բնակավայր՝ 8 քաղաք և 120 գյուղ: Հյուսիսում պետական սահմանով սահմանակցում է Վրաստանի Հանրապետության, արևմուտքում՝ Շիրակի, արևելքում՝ Տավուշի, իսկ հարավում՝ Կոտայքի և Արագածոտնի մարզերի հետ:

Մարզի տարածքով անցնում են Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք միջպետական նշանակության Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման, Վանաձոր- Ալավերդի-Վրաստանի սահման և Վանաձոր-Դիլիջան-Ադրբեջանի սահման մայրուղիները, ինչպես նաև Երևան-Գյումրի-Վանաձոր-Ալավերդի-Թբիլիսի և Հրազդան-Իջևան երկաթգծերը:

Մարզի ապահովվածությունը ճանապարհային ցանցով, ընդհանուր առմամբ, բարենպաստ է, բայց կան անհամամասնություններ ավտոմայրուղիների բարենպաստ ազդեցության գոտում (5 կմ) տարածքների ընդգրկվելու տեսանկյունից: Մարզի ինտենսիվ յուրացված գոտու մոտ 89 %-ը գտնվում է ավտոմայրուղիների բարենպաստ ազդեցության գոտում, իսկ թույլ յուրացված գոտու՝ միայն 23 %-ը: Այս անհամամասնությունները վերացնելու

համար անհրաժեշտ է առաջնահերթ տեղական և հանրապետական նշանակության ճանապարհային ցանցի կատարելագործում:

«Լոռի-1» Գուգարքի տարածաշրջանը՝ 48.19% (1 քաղաքային՝ Վանաձոր և 26 գյուղական բնակավայրեր՝ Ազնվաձոր, Անտառամուտ, Անտառաշեն, Արջուտ, Արջուտի կայարանին կից, Բազում, Գուգարք, Գյուլլուդարա, Դարպաս, Դեբեդ, Եղեգնուտ, Լերմոնտովո, Լեռնապատ, Հալլավար, Հայդարլի, Ձորագետ, Ձորագյուղ, Մարգահովիտ, Շահումյան, Վահագնաձոր, Վահագնի, Փամբակ, Փամբակ կայարանին կից, Քիլիսա, Քարաբերդ, Ֆիոլետովո համայնքներ) տեղադրված է Փամբակի, Բազումի, Բովաքարի լեռան միջև ընկած միջլեռնային գոգավորությունում, դրա լայնացված մասերում (մինչև 1.6 կմ): Գոգավորության կենտրոնով հոսում է Փամբակ գետն իր աջափնյա Վանաձոր, Տանձուտ, ձախափնյա Բազում վտակներով:

Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Մարզի հանքային պաշարներից են պղնձի, պղինձ-մոլիբդենային (Ալավերդու, Շամլուղի, Թեղուտի), ոսկու, ոսկի-բազմամետաղային (Արմանիսի, Մարցիգետի) խոշոր հանքավայրերը, բնական շինարարական քարերի և շինանյութերի հանքավայրերը:

Մարզը հարուստ է անտառային և լեռնատափաստանային տարածքներով, ինչպես նաև մերձալպյան մարգագետիններով: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101205



հա, որից անտառածածկ է 86 հազ. հա-ն: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%-ը:

Մարզում առկա են 3 արգելավայրեր («Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»), ընդհանուր՝ 17 576 հա մակերեսով, 1 բուսաբանական այգի և 2 դենդրոպարկ: Անձնագրավորված են 9 բնության հուշարձան՝ 165 հա ընդհանուր մակերեսով:

«Լոռի-1» շրջանը գտնվում է Լոռու բուսաբանա-աշխարհագրական ֆլորիստական շրջանի հարավ-արևմտյան մասում:

Հաշվի առնելով մարզի ինժեներական, տրանսպորտային ենթակառուցվածքների ընդհանրությունը, ռեսուրսների համատեղ օգտագործման անհրաժեշտությունը, տարածաշրջանի զարգացման տնտեսական և քաղաքաշինական ուղղությունները լուծվել են «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի Լոռու մարզին վերաբերող հիմնախնդիրների հետ փոխկապակցված՝ շեշտը դնելով քաղաք Վանաձորի վրա:

Վանաձոր քաղաքը տեղադրված է Փամբակի և Բազումի լեռնաշղթաների միջև ընկած միջլեռնային գոգավորությունում, դրա լայնացված մասերում (մինչև 1.6 կմ), որը նեղանում է՝ հասնելով 1 կմ-ի քաղաքի արևմտյան մասում («Դարպաս» թաղամասի արևելյան ծայրամասը): Գոգավորության կենտրոնով հոսում է Փամբակ գետն իր աջափնյա Վանաձոր, Տանձուտ, ձախափնյա Բազում վտակներով:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գլխավոր նախագծի» հիմնական դրույթների, մարզի տարածքն ըստ քաղաքաշինական-տնտեսական յուրացվածության աստիճանի բաժանվում է հետևյալ գոտիների՝ ինտենսիվ յուրացված, թույլ յուրացված, ռեկրեացիոն- բնապահպանական, տարաբնակեցման համար անբարենպաստ:

2022թ. հուլիսի 1-ի դրությամբ Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 250,844.0 հա, որից՝ վարելահող 41977.1 հա, բազմամյա տնկարկներ՝ 447.6 հա, խոտհարքներ՝ 35058.4 հա, արոտավայրեր՝ 145 593.8 հա, այլ հողատեսքեր՝ 27767.1 հա: Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 7553.559 հա :

Մարզը հարուստ է ջրային, հանքահումքային և ռեկրեացիոն ռեսուրսներով: Խմելու ջրի ընդհանուր պաշարները կազմում են 327.2 հազ.մ³/օր: Մարզի դեմոգրաֆիական տարողունակությունն, ըստ խորքային և մակերեսային ջրերի օգտագործման, կազմում է 962.0 հազ. մարդ: Մարզի տարածքում հոսում են 1356 գետեր և գետակներ, մարզի գետերի ջրերը հիմնականում օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ: ՀՀ Լոռու մարզի տարածքով է անցնում ՀՀ ամենաջրառատ լեռնային գետը՝ Դեբեդը, որի ափին դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին կառուցվել է «Ձորագետ հիդրո» ՀԷԿ-ը:

«Լոռի-1» Գուգարքի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծը ընդգրկում է 24692.8 հա տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 88893 մարդ: Հեռանկարում բնակչության թիվը կկազմի 111560 մարդ:

- «Լոռի-1» Գուգարքի տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ) նախագիծը ներառում է.
- Վանաձոր խոշորացված համայնքը - Վանաձոր քաղաք, Գուգարք, Դարպաս, Շահումյան գյուղական բնակավայրեր,
 - Լերմոնտովո խոշորացված համայնք - Լերմոնտովո, Անտառաշեն բնակավայր,
 - Ֆիոլետովո համայնք - մեկ՝ Ֆիոլետովո բնակավայր:

«Լոռի-1» տարածաշրջանի համայնքների վարչական տարածքները գրառեցնում են 27131.4168 հա տարածք, ընդգրկելով՝ բնակավայրի, գյուղատնտեսական նշանակության



հողեր, արդյունաբերական ձեռնարկությունների զբաղեցրած հողատեսքեր, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր, հատուկ պահպանվող տարածքներ, անտառային, ջրային, հատուկ նշանակության հողեր՝ այդ թվում փաստացի՝

- բնակավայրերի հողեր – 2645.5786 հա, հեռանկարում՝ 2660.504565 հա,
- գյուղատնտեսական հողեր – 13945.5205 հա, հեռանկարում՝ 13873.21346 հա,
- արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր – 551.7109 հա, հեռանկարում՝ 505.4612 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմուն. հողեր – 130.7484 հա, հեռանկարում՝ 148.498175 հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր – 1136.8951 հա, հեռանկարում՝ 1222.9584 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ հեռանկարում՝ 24.6181 հա,
- անտառային հողեր – 8633.8471 հա, հեռանկարում չեն փոխվելու,
- ջրային հողեր – 87.1162 հա, հեռանկարում՝ 86.9339 հա,
- պահուստային հողերը համայնքի տարածքում բացակայում են:

Միկրոռեգիոնում ընդգրկված բնակավայրերի զբաղեցրած մակերեսները հետևյալն են՝ Վանաձոր քաղաքը զբաղեցնում է՝ 2516.0481 հա, Գուգարք՝ 4779.8447 հա, Դարպաս՝ 5583.8688 հա, Շահումյան՝ 6223.7373 հա, Անտառաշեն՝ 1070.5649 հա, Լերմոնտովո՝ 2534.3427 հա, Ֆիոլետովո՝ 4423.0103 հա:

Լոռու մարզի վերը նշված բնակավայրերի տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

«Լոռի-1» տարածաշրջանի բնակավայրերի շրջակա միջավայրի վրա տեխնաձին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության բնական գործոնների թվին են դասվում սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

«Լոռի-1» տարածաշրջանի բնակավայրերի շրջակա միջավայրի վրա տեխնաձին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումը արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումը արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,



- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

«Լոռի-1» միկրոռեգիոնի նախագծով նախատեսված աշխատանքների արդյունքում տարածաշրջանի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը:

Համայնքի զարգացման համար նախագծում հաշվի է առնվել հետևյալ սկզբունքները՝

- քաղաքաշինական գործունեության օբյեկտ հանդիսացող հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջներն ու սահմանափակումները,
- հողատարածքների կառուցապատման առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի) և հեռանկարային (10-15 տարի) փուլերը,
- համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի նպատակային նշանակությունը և դրանց փոփոխությունները:

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, համայնքների կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման և էռոզիայից պահպանման միջոցառումների շարքին:

Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը մնում է ոչ աղտոտված (առաջին դասի վտանգավորության նյութերի բացակայության պարագայում): Մթնոլորտ ածխածնի օքսիդի, իսկ Վանաձոր քաղաքային բնակավայրում նաև փոշու արտանետումների նվազեցման համար անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ միջոցառումներ:

Հեռանկարում մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արդյունաբերական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:

«Լոռի-1» միկրոռեգիոնում, հեռանկարում նախատեսվում է զարգացնել սննդարդյունաբերությունը, գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման արտադրություններ, հանքանյութի վերամշակում, հանքային ջրերի շրջանային արտադրություններ, այսինքն արտադրություններ, որոնց գործունեության հետևանքով մթնոլորտ վնասակար արտանետումները գրեթե բացակայում են:

Համայնքների տարածքի հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով և նոր շենքերի և շինությունների տեղադրման ընտրությունը սահմանափակված չէ: Հողերի աղտոտվածության մակարդակի փոփոխություն չի կանխատեսվում, քանի որ արդյունաբերական օբյեկտների գործարկում քաղաքային և գյուղական բնակավայրերում նախատեսված չէ:

Հողերի պահպանման գլխավոր ուղղությունը հակաէրոզիոն միջոցառումներն են: Հակաէրոզիոն միջոցառումներ բազմաբնույթ միջոցառումների համալիր է, որի նպատակն է պաշտպանել հողի վերին՝ առավել բերրի շերտը տեղատարումից, վերականգնել և բարելավվել հողատարածությունները: Հողերի պահպանության տարածված եղանակ է հողերի վերականգնումը (ռեկուլտիվացիա):

Քանի որ մակերևութային և ստորերկրյա ջրի սուքերն ակտիվացնում են սողանքները, սողանքավտանգ տարածքներում չի թույլատրվում ջրագծեր (ջրմուղկոյուղու), առավել ևս բաց ջրանցքներ կառուցել:

Սողանքային մարմնի հետագա ակտիվացումները կանխելու նպատակով իրականացվելու է ինժեներաերկրաբանական հետազոտություն, որի հիման վրա կնախապատրաստվեն առաջարկություններ սողանքի վտանգը և հետագայում կանխարգելիչ



վթարային իրավիճակները կանխելու համար: Նախնական միջոցառումների շրջանակում իրականացվելու են առաջացած ճեղքերի կավային ջրակայուն գրունտներով փակման աշխատանքներ, ինչը կբացառի մակերևութային ջրերի հետագա ներթափանցումը գրունտի մեջ: Քանի որ տեղանքի ռելիեֆը թույլ չի տալիս ստանալ մեծ կետայնության պանարամային լուսանկարներ՝ իրավիճակը առավել պատկերավոր դարձնելու նպատակով լուսանկարահանումները կիրականացվեն անօդաչու թռչող սարքերի (դրոններ) միջոցով:

Սողանքների դեմ պայքարելու համար կառուցվում են գետափերն ամրացնող ու ցամաքորդային կառույցներ, կատարվում ծառատնկումներ և այլ միջոցառումներ:

Հաշվի առնելով մարզի կլիմայական պայմանները՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան: Արևային կոլեկտորների կիրառման համար առանձին տարածքներ հարկավոր չէ զբաղեցնել, քանի որ դրանք կարելի է տեղադրել անմիջապես շենքերի տանիքներին: Նախատեսվում է վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում, որը, հաշվի առնելով դրանց՝ նվազագույն ծախսումներով էլեկտրաէներգիայի արտադրական հզորությունների զարգացման պլանի մաս կազմելու հանգամանքը, հանդիսանում է էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկը:

Շրջակա միջավայրի իրավիճակի վրա և մարդու առողջության բարելավմանը նպաստող միջոցառումները և նախագծային լուծումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում;
- ՀՀ պետական բյուջեով 2023-2024 թթ. և 2024թ. նախատեսվող պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման ծրագրերի իրականացում,
- Վանաձոր քաղաքում ասֆալտապատ փողոցների գծանշման աշխատանքներ իրականացում, ինչն արդեն իսկ իրականացվել է,
- Գծանշման աշխատանքների իրականացում Վանաձոր համայնքի բնակավայրերի ասֆալտապատ փողոցներում,
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերում էներգետիկ արդյունապետությունն ապահովող միջոցառումների իրականացում,
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցման համակարգերի բարելավում և բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի վերակառուցում /նախատեսելով կենսաբանական մաքրում/ նախագծում և կառուցում,
- Փամբակ գետի աղտոտված լինելու հանգամանքով պայմանավորված նոր մաքրման կայանի կառուցում,
- Վանաձոր քաղաքի ջրամատակարարման ցանցի մաշված հատվածները վերանորոգում,
- Վանաձոր համայնքի բնակավայրեր մուտք գործող ջրատարների ջրերի վարակազերծումը կատարել քլորակայաններում,
- էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգիայի աղբյուրների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում,



- Հաշվի առնելով, որ արդյունաբերական և կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման համար անհրաժեշտ է ավելի մեծ հզորություն (200-220 հազ. մ3/օր) և մեծ սանիտարապաշտպանիչ գոտի ունեցող մաքրման կայան, նախատեսել մաքրման կայանի վերակառուցում ապահովելով մյուս բնակավայրերի կեղտաջրերը (լրիվ բիոլոգիական մաքրում և կրկնակի մաքրում),
- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերակառուցում և հիմնանորոգում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- կաթիլային ոռոգման համակարգի ներդրում,
- ջրամբարների կառուցում՝ ջրի արդյունավետ օգտագործման նպատակով,
- համայնքի բնակավայրերում հանգստյան գոտիների ստեղծում;
- համայնքների տարածքում աղբահանման և ազրի տեսակավորման կազմակերպում;
- ներդնել աղբահանության ինտեգրված համակարգ՝ տարածաշրջանային սանիտարական աղբավայրի և փոխաբեռնման կայանների կառուցմամբ, որը հնարավոր է սպասարկի 2 մարզ,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում);
- հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,
- ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,
- անտառների հիմնման և ընդլայնման աշխատանքների իրականացում,
- խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
- անցնել լրիվ գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները՝ տարեկան 39.47 տ/տարի;
- արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանխելու նպատակով,
- գյուղատնտեսական հողերի բերրիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Հեռանկարում բնակչության թվի ավելացման, IV-V դասի արդյունաբերական ձեռնարկությունների շահագործմանը, անասնապահության, հողագործության զարգացման հետ զուգահեռ նկատվում է օդի, հողային և ջրային պաշարների աղտոտվածության աննշան ավելացում, սակայն նախատեսված բնապահպանական միջոցառումների ներդրման արդյունքում (ավտոտրանսպորտի արտանետումների վերահսկում, կեղտաջրերի մաքրման կայանների շահագործում, թափոնների կառավարում): Տարածքը մնում է թույլ աղտոտվածության գոտում, այսինքն նորմայի սահմաններում:

«Լոռի-1»-ի տարածաշրջանի բնակավայրերում տեղակայված է ընդհանուր թվով 12 գերեզմանոց՝ ընդհանուր 50 հա մակերեսով: Գերեզմանոցները գրեթե բոլորը գործող են: Գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին հիմնականում պահպանված չէ:

Վանաձոր քաղաքում առկա է 6 գերեզմանոց, մեկական Գուգարք, Դարպաս և Շահումյան գյուղերում, որոնք գործող են, սակայն գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին հիմնականում պահպանված չէ: Վանաձոր քաղաքում կոնսերվացված են Խնձորուտ թաղամասի և Ղարաքիլիսային հին գերեզմանոցները, և չեն համապատասխանում նորմերին, գործող է թիվ 2 գերեզմանոցը, որը սահմանազատված չէ առկա են բազմաթիվ նորմտափվ խնդիրներ: Սույն նախագծով նախատեսվում է



գերեզմանոցների պարսպապատում՝ հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար, Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում, այն բնակավայրերում, որտեղ կա հնարավորություն՝ գերեզմանոցի և բնակավայրի միջև սանիտարական պաշտպանիչ կանաչապատ գոտու նախատեսում, փոշու արտանետումների տարածման կանխարգելմանն ուղղված գերեզմանոցների տարածքի բարեկարգում և կանաչապատում, մոտեցնող ճանապարհների խճապատում կամ կարծր ծածկույթով պատում՝ ինչպես ամռան այնպես էլ ձմեռային ժամանակահատվածում անարգել մոտեցում ապահովելու համար, Գերեզմանատների մուտքային հատվածներում ապահովել գործող նոմերի պահանջներին համապատասխան ավտոկայանատեղեր, խմելու ջրի ցայտաղբյուր: Գերեզմանատան հատակազծային կազմակերպման շրջանակում նախատեսվում է ծառուղիների նույն լայնության ապահովում, դրանց երկայնքով ծառատնկումների իրականացում, գերեզմանատների սանիտարապաշտպանիչ գոտիների համար ևս նախատեսվում է մինչև 40 % տարածքի ծառատնկումներ՝ սանիտարական բարձր հատկանիշներ ունեցող ծառատեսակներով:

Ներկայումս՝ Գուգարքի «Լոռի-1» տարածաշրջանի համայնքներում գոյացած կենցաղային թափոնները տեղադրվում են Վանաձոր քաղաքում և գյուղական բնակավայրերի աղբավայրերում: Աղբավայրերը թերի են շահագործվում և առաջացնում է լուրջ բնապահպանական, սանիտարական և կյանքի անվտանգության ռիսկեր: Նոր աղբավայրի տեղանքի ընտրությունը կայացվում է հիմնվելով մի շարք գործոնների հիման վրա՝ Նոր մերձատար ուղի՝ Վանաձոր-Սպիտակ մայրուղուն միացումով, գլխավոր դարպաս և ցանկապատ, հսկողության կետ՝ համալրված կշեռք-հենահարթակով, հիմնական շինություն, արհեստանոց և ավտոտնակի շինություն, աղբավայրի տարածք՝ համալրված մեկուսացման համակարգով, նվազագույնը 25 տարի շահագործման ժամկետով, կեղտաջրերի հավաքում և մշակում, գազի կորզում և մշակում, անձրևաջրերի ավազան, օգտահանման տարածք, անվադողերի լվացման կետ, Նախնական մշակման տարածք (ըստ ցանկության): Սույն նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրի տարածքը պարսպապատել, բարեկարգել, կանաչապատել:

«Լոռի-1» միկրոռեգիոնի բնակավայրերի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր՝ բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում համայնքապետարաններում, վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովվելով հետագա ոռոգումը, ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում, հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև գյուղական բնակավայրերի կանաչապատմանը, որպես օդը մաքրող գործոն: Նախատեսված են այգիներ, սպորտ-հրապարակներ՝ կանաչ գոտիով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Բացի դրանից նախագծված են նաև մագիստրալ ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում: Սահմանափակ օգտագործման կանաչ տարածքների մակերեսը ներկա դրությամբ կազմում է 121.86 հա, հատուկ պահպանվող տարածքների մակերեսը կազմում է 14.38 հա:

Ընդհանուր օգտագործման կանաչապատման են վերագրվում՝ համայնքային զբոսայգիներն ու պուրակները, որոնք նախատեսված են համայնքի բնակչության կարճատև հանգստի կազմակերպման համար: Սահմանափակ օգտագործման կանաչապատման են



վերագրվում՝ տարբեր հասարակական նշանակության ու արտադրական ձեռնարկությունների տարածքներում գտնվող կանաչապատ զանգվածները հատուկ նշանակության կանաչապատման են վերագրվում՝ ֆոնսանիտարապաշտպանական նպատակներով իրականացված կանաչապատ զանգվածները, այդ թվում նաև փողոցների ու մայրուղիների մայթերի եզրերի կամ երթևեկելի մասի բաժանիչ շերտերի կանաչապատումը:

Գյուղական բնակավայրերի բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից: Վանաձոր համայնքը ունի կոյուղու մեխանիկական մաքրման կայան: Թեև քաղաքն ունի կոյուղու կոլեկտոր, որը բավարար վիճակում է գտնվում և գործածվում է, սակայն քաղաքի հոսքաջրերը հավաքվելով քաղաքից մոտ 10 կմ հեռավորության վրա թափվում են Փամբակ գետը՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ: Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը իրականացնել միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով: Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր:

Հեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար: Նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Դիտարկվող տարածաշրջանի բնակավայրերի ջրամատակարարման տեխնիկական վիճակն անբավարար է: Բնակավայրերի մի մասի մասի ջրամատակարարման ցանցերն ունեն արդիականացման կարիք: Հոսակարուստների զգալի տոկոսը, ջրաչափերի բացակայությունը, ինչպես նաև խմելու ջրի օգտագործումը ոռոգման նպատակով խոչընդոտ են հանդիսանում այդ բնակավայրերում շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու համար: Նախագծային առաջարկություններն են՝ Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում: Բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով նախատեսվում է բնակավայրերի տարածքում պահանջվող ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում, բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով: Ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿԶ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում: Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում: Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն: Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ: Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

«Լոռի-1» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում սանիտարապաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման չափերն ընդունված են համաձայն CH245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմաներ»-ի:



Հաշվի է առնված նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հիգիենիկ և համաճարակային բաժնի համաձայնությունը:

Նախատեսված են մի շարք միջոցառումներ արդյունաբերական ձեռնարկությունների կաթսայատների և ավտոտրանսպորտի արտանետումների նվազեցման համար:

Առաջնահերթ օդապահպանական նպատակներով նախատեսվում են տեխնոլոգիական և սանիտարատեխնիկական բնույթի միջոցառումներ:

«Լոռի-1» միկրոռեգիոնի տարածքը շրջապատված է հյուսիսից և հարավից անտառտնտեսության, իսկ արևելքից, հարավ-արևելքից, հյուսիս-արևմուտքից՝ գյուղատնտեսական արժեքավոր հողերով: Այդ հողերի խնայողության, ինչպես նաև շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության պահպանման նպատակով քաղաքի համար սահմանված է տարածքային աճի սահմանափակման ռեժիմ՝ կառուցապատված տարածքների ինտենսիֆիկացումով: Բնակելի բոլոր թաղամասերի համար ընտրված են բնակչության և կառուցապատման նորմերին համապատասխանող խտություններ:

Արդյունաբերական գոտում նախատեսվում է միայն համաշխարհային ստանդարտներին համապատասխանող տեխնոլոգիաներով (փակ ցիկլերով, առանց վնասակար հոսքերի և արտանետումների) արդյունաբերական օբյեկտների տեղադրում: Քաղաքի տարածքային աճի սահմանափակման քաղաքաշինական ռեժիմը բացառում է գյուղատնտեսական նշանակության և անտառտնտեսության հողերի օգտագործումը կառուցապատման նպատակով:

«Լոռի-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի գործունեության ընթացքում իրականացվելու է ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն: Դա թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաև տարածաշրջանի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները:

Ընդհանուր առմամբ հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափոնների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:

Պարճառարանական մաս. «Լոռի-1» ՄՄՀՏՊ փաստաթղթում ընդգրկված բնակավայրերի համար առաջարկված քաղաքաշինական լուծումների իրականացման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, ՇՄԱՌԳ հաշվետվությունում համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Փաստաթղթի փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, Լոռու մարզպետարանը: Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի լրամշակվել է՝ հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները և դիտողությունները:



Փորձաքննության բոլոր փուլերում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել հիմնադրույթային փաստաթղթի վերաբերյալ:

Ծրագրի ազդեցության ենթակա համայնքի և բնակավայրերի հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է հաշվետվության գնահատման և փորձաքննական գործընթացներին:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի «Լոռի-1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան